# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2018 թվականի N 477 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագրում ներառված միջոցառումների մոնիթորինգային ցուցանիշները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկա- վարներին՝ ապահովել, որ մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքային օրը միջոցառման համար պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության տնտեսա- կան զարգացման և ներդրումների նախարարություն ներկայացնի տեղեկատվություն Հայաս- տանի գործարար միջավայրի բարելավման 2018 թվականի միջոցառումների ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին՝ բացառությամբ այն միջոցա-

ռումների, որոնց պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն է: Տեղեկատվության մեջ պետք է մանրամասն արտացոլվեն իրականացված կամ իրականացվող միջոցառումները և դրանց ազդեցությունը, մասնավորապես, միջոցառման կատարման արդյունքում ընթացակարգերի, դրանց ժամկետների և (կամ) ծախսի կրճատման վրա:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ ամփոփել ներկայացված տեղեկատվությունը և մինչև յուրաքանչյուր ամսվա տասներորդ աշխատանքային օրը կատարված աշխատանքների ընթացքի մասին հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մայիսի 5
Երևան



Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
մայիսի 5 -ի N 477 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Առաջարկվող միջոցառումը | Նպատակը | Պատասխանատու մարմինը | Կատարման ժամկետը | Միջոցառման իրականացման համար պահանջվող գումարի աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1. Ընկերությունների հիմնում** | | | | | |
| 1) | Իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով իրականացման, այդ թվում՝ ընկերությունների կանոնադրության և այլ փոփոխությունների (վերակազմավորում, լուծարում և այլն) կատարման հնարավորության ստեղծում | իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի մատչելիության և հասանելիության ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն | 31.10.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Ուսումնասիրել ՀՀ օրենսդրական դաշտում փաստաթղթի կնքված լինելը, այդ թվում՝ պետական մարմինների կողմից տրվող, որպես վերջինիս վավերական համարվելու նախապայման հանդիսանալու մասով և համապատասխանաբար ներկայացնել առաջարկություն տվյալ դրույթի վերացման մասով | գործարար շրջանառության մեջ կնիքի կիրառության հնարավորինս բացառում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Իրավաբանական անձանց պետական գրանց-ման գործընթացի վերաբերյալ գովազդային տեսահոլովակի նկարահանում և տարածում՝ որտեղ կպարզաբանվի տիպային կանոնադրու-թյամբ ՍՊԸ-ի գրանցման համար պահանջվող ժամանակատարությունը | իրավաբանական անձանց պետական գրանցման գործըն-թացի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | 15.07.2018թ. | |
| 4) | Իրավաբանական անձանց պետական գրանց-ման գործընթացի վերաբերյալ գովազդային տեսահոլովակի նկարահանում և տարածում՝ որտեղ կարտացոլվեն ՀՀ պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներ-առևտրային բանկերի միջոցով իրավաբանական անձ գրանցելու հետ միաժամանակ բանկային հաշվի բացման հնարավորությունը որոշակի ստանդարտացված դեպքերի համար, մասնավորապես՝<br>ա. ՍՊԸ-ն գրանցվում է տիպային կանոնա-դրությամբ,<br>բ. ՍՊԸ գրանցող անձը միաժամանակ հանդիսա-նում է հիմնադիր և տնօրեն,<br>գ. առևտրային բանկն ապահովում է փողերի լվացման և ահաբեկության ֆինանսավորման դեմ պայքարի ՀՀ օրենսդրության պահանջների ստուգումը,<br>դ. ՍՊԸ գրանցող անձը գումար է մուտքագրում իր նորաբաց բանկային հաշվին,<br>ե. ՍՊԸ գրանցող անձը փոխանցում է կատարում իր նորաբաց բանկային հաշվից | իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)<br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)<br>ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5) | Իրավաբանական անձի կողմից փաստա-թուղթը կնիքով վավերացնելու անհրաժեշ-տության բացակայության վերաբերյալ իրա-զեկվածության բարձրացում | գործարար շրջանառության մեջ կնիքի կիրառության հնարա-վորինս բացառում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից | |
| **2. Շինարարական թույլտվություններ** | | | | | |
| 1) | Շինարարության ոլորտի ամբողջ գործ-ընթացի հստակեցման և իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի պարզեցման, հայեցողական լիազորությունների հստակեցմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում և Հայաստանի Հան-րապետության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագծի՝ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում | շինարարության ոլորտում առկա վարչարարության, իրավական ակտերով նախատեսված ընդհանուր պահանջների պարզեցում և հստակեցում | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե<br>ՀՀ տարածքային կառա-վարման և զարգացման նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>ՀՀ հանրային ծառա-յությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)<br>«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ)<br>«Վեոլիա ջուր» ՓԲԸ (համաձայնությամբ)<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (համաձայնությամբ) | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2) | «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին», «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» և «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներում համապատասխան փոփոխությունների կատարում | «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման», «Բնական գազի մատակարարման և օգտագործման» և «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման» կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների համապատասխանեցում ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթներին | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 2-րդ բաժնի 1-ին ենթակետով նախատեսված որոշման ընդունումից հետո՝ 3 շաբաթյա ժամկետում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Շինարարական թույլտվությունների առցանց համակարգն սպասարկող կազմակերպության հետ պայմանագրի կնքման ապահովում՝ կառուցապատման թույլտվությունների տրամադրման e-permits էլեկտրոնային համակարգը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումից բխող ընթացակարգերին ամապատասխանեցնելու նպատակով | կառուցապատման և քանդման նպատակով թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի գործարկման միջոցով թույլատվական ընթացակարգերի վերահսկելիության ապահովում՝ (իրական ժամանակում տեսնելով դիմումի գտնվելու վայրը, իրավասու մարմնի կողմից ժամկետների պահպանված լինելը) ժամկետների պահպանումը և պրոցեսի մասնակիցների միջև քայլերի օպտիմալացումը (այդ թվում՝ շահագրգիռ օգտագործողների կողմից)՝ ամբողջ գործընթացի իրականացման | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե<br>ՀՀ կառավարության աշխատակազմ | 2-րդ բաժնի 1-ին ենթակետով նախատեսված որոշման ընդունումից հետո՝ 3 շաբաթյա ժամկետում | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ընթացքում, ինչպես նաև նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը | | | |
| 4) | Կառուցապատման թույլտվություններ տալու գործընթացների հանրային իրազեկում | գործող կարգավորումների շրջանակում շահառուների իրավունքների լիարժեք իրացման նպատակով իրազեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե<br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական<br>սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | |
| **3. Էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցին միացում** | | | | | |
| 1) | Էլեկտրամատակարարման ցանցին միացման սահմանված ժամկետների ապահովում | միացման օրերի փաստացի տևողության համապատասխանեցում իրավական ակտով սահմանված ժամկետներին | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ) | սկսած 08.01.2018 թ.-ից | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Դիմում ներկայացնելու և պայմանագրի ստորագրման քայլերի միավորում՝ ստանդարտ միացման դեպքերում | միացման քայլերի կրճատում մինչև 2 | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Վանաձոր և Գյումրի քաղաքների և մատակարար կազմակերպությունների միջև համաձայնեցումների էլեկտրոնային համակարգի ներդրում: Այլ տեղական ինքնակառավարման մարմինների և մատակարար կազմակերպությունների միջև համաձայնեցումների էլեկտրոնային համակարգի ներդրման ժամանակացույցի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | միացման ժամկետի հնարավոր կրճատում՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում օգտագործելով էլեկտրոնային համակարգեր | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Տեղական ինքնակառավարման մարմինների և «ՀԷՑ» ՓԲԸ-ի միջև | միացման ժամկետի հնարավոր կրճատում՝ տեղական ինքնա- | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բիզնես գործընթացները և փոխհարաբերությունները տիպային դարձնելու նպատակահարմարության քննարկում և անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկության ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | կառավարման մարմինների հետ հարաբերություններում առաջնորդվելով փոխադարձ կանխատեսելիության սկզբունքով | (համաձայնությամբ)<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | | |
| 5) | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում անջատումների ավտոմատ մոնիթորինգի մեխանիզմների կատարելագործում՝ անջատումների մասին հաշվետվությունների ստացման ավտոմատացման միջոցով | անջատումների ավտոմատ մոնիթորինգի մեխանիզմի համապատասխանեցում «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի պահանջներին՝ ինտե-գրված ցուցանիշի աճ մեկ կետով | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ) | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **4. Սեփականության գրանցում** | | | | | |
| 1) | Անշարժ գույքի գործարքները պարտադիր նոտարական վավերացման անհրաժեշտության բացակայության, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապ-ված գործարքների տեսակների և նոտա-րական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կիրառվող՝ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի շրջանակներում գնահատվող, էլեկտրոնային համակարգերի վերաբերյալ քարոզարշավ իրականացնելու պլան-ժամանակացույցի մշակում և համաձայն պլան- ժամանակացույցի քարոզարշավի իրականացում՝ ներկայացնելով դրանց առավելությունները | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրա-զեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 25.02.2018 թ.-ից շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| **5. Վարկերի ստացում** | | | | | |
| 1) | Ապահովված իրավունքի իրավական կիրառության ապահովում գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղների, արտադրանքի և եկամուտների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: | ապահովված պարտատերերի իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Վարկերի ստացում» ցուցիչի «Օրինական իրավունքների ամրությունը» ենթացուցիչի՝ ըստ ցանկի՝ 11-րդ հարցին «այո» պատասխանի ապահովմանն ուղղված իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ | ապահովված պարտատիրոջ շահերի պաշտպանություն | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ քաղաքացիական օրենսգիրք)՝ գրավի իրավունքը կարգավորող 15-րդ գլխի 234-րդ հոդվածում նախատեսել դրույթ՝ հնարավորություն տալով գրավի պայմանագրով սահմանելու գրավի առարկայի, այդ թվում՝ առարկաների խմբի ընդհանուր նկարագրություն անկախ որևէ չափանիշների | վարկերի ստացման ոլորտի օրենսդրության կատարելա-գործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 29.06.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Քաղաքացիական օրենսգրքում և «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսել դրույթներ, որոնք հնարավորություն կտան գրանցել նաև սեփականության իրավունքի պահպանմամբ կնքվող գործարքից բխող իրավունքները: | վարկերի ստացման ոլորտի օրենսդրության կատարե-լագործում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 29.06.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից, շարունա-կական | |
| **6. Փոքր բաժնետերերի պաշտպանություն** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1) | Փոքր բաժնետերերի պաշտպանության նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացում | փոքր բաժնետերերի (փայատերերի) շահերի պաշտպանության մեխանիզմի ամրապնդում, փոխկապակցվածության և շահագրգռվածության առկայությամբ կնքվող գործարքների թափանցիկության ապահովում, ընկերությունների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | |
| **7. Հարկերի վճարում** | | | | | |
| 1) | ԱԱՀ դեբետային գումարների վերադարձի իրականացում հնարավոր կարճ ժամկետներում, մասնավորապես, դիմումը ստանալուց հետո 4 շաբաթվա ընթացքում | ապահովել ԱԱՀ դեբետային գումարների հնարավորինս արագ վերադարձ | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 2) | Տնտեսավարող սուբյեկտների կողմից 2017 թվականի 4-րդ եռամսյակի բնապահպանական և բնօգտագործման հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ուղղությամբ աշխատանքների իրականացում | ակնկալվում է կրճատել հարկ վճարողների կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմման ժամանակը | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018թ.-ից շարունակական | |
| **8. Արտաքին առևտուր** | | | | | |
| 1) | Արտաքին տնտեսական գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների առանձին գործողությունների (ժամանակատարության, ծախսատարության և մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերի) վերաբերյալ հաշվառման իրականացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Արտաքին տնտեսական գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների առանձին գործողությունների (ժամանակատարության, ծախսատարության և մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերի) կրճատման ուղղված միջոցառումների իրականացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Սահմանահատման գործընթացների վրա «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի ուժի մեջ մտնելու կապակցությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների բացթողման և դրա գործողության եզրափակման ժամկետներն արտացոլող | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վիճակագրության ձևի սահմանում, որը պետք է հրապարակվի ամսական կտրվածքով | | | | |
| 4) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | |
| **9. Պայմանագրերի կիրարկում** | | | | | |
| 1) | Pro-bono իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց խրախուսման մեխանիզմների ներդնում | արդարադատության մատչելիության ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Պարզեցված վարույթի կարգով քաղաքացիական գործերի քննության նախատեսում | քաղաքացիական գործի քննության ժամկետների կրճատում, արդյունա-վետության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Դատական տեղեկատվական համակարգի կատարելագործում, այդ թվում՝ դատական գործերի վարման էլեկտրոնային համակարգի զարգացում | տեղեկատվության հասանելիու-թյուն, դատավարական փաստաթղթերի մատչելիություն, ժամանակային ծախսերի նվազեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.11.2018 թ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 4) | Դատարանի կողմից էլեկտրոնային եղանակով դատավարական փաստաթղթեր առաքելու հնարավորության նախատեսում | արդարադատության մատչելիություն, ժամանակային ծախսերի նվազեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 30.11.2018 թ. | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 5) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվա-ծության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>«Ռազմավարական | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | | |
| **10. Սնանկության ճանաչում** | | | | | |
| 1) | Սնանկության դատարանի՝ որպես մասնագիտացված դատարանի ստեղծում | գործերի առավել որակյալ քննության ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) | 31.12.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2) | Սնանկության վարույթի ընթացքում պարտապանի կողմից իր համար անբարենպաստ պայմանագրերի կատարումից հրաժարվելու հնարավորության նախատեսում | ֆինանսական առողջացման ծրագրի արդյունավետ իրագործում և տնտեսավարող սուբյեկտի բնականոն գործունեության վերականգնում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3) | Սնանկության վարույթի ընթացքում կատարվող գործողությունների համար հստակ ժամկետների սահմանում | սնանկության վարույթի արդյունավետության բարձրացում և ժամկետների կրճատում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4) | Պարտատերերի առանձնացում՝ ըստ դասերի | պահանջների բավարարման արդյունավետության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5) | Սնանկության վարույթի ընթացքում պարտապանի կողմից վարկեր ստանալու հնարավորության նախատեսում | ֆինանսական առողջացման արդյունավետ իրականացում, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների իրականացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6) | Շահառուների շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | գործող կարգավորումների առավելություններից օգտվելու նպատակով շահառուների իրազեկվածության բարձրացում | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | սկսած 10.01.2018 թ.-ից շարունակական | |

| 11. Այլ միջոցառումներ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1) | Բարեփոխումներին աջակցելու նպատակով պետություն-մասնավոր հատված համա-գործակցության ոլորտային խմբերի ձևավորում | երկխոսության միջոցով վեր հանել ոլորտում առկա խնդիրները և համատեղ ջանքերով մշակել խնդիրների լուծման կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ | ՀՀ արդարադատության նախարարություն «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) Դատական և իրավական բարեփոխումների, այդ թվում՝ սնանկության գործընթացների կատարելագործման ոլորտային խումբ (համաձայնությամբ) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) Գործարար միջավայրի բարելավման և կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառության հարցերի ոլորտային խումբ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման և զարգացման | 15.05.2018 թ. | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>Քաղաքաշինության ոլորտի իրավական կարգավորումների կատարելագործման և էներգետիկ ենթակառուցվածքների հասանելիության բարձրացման ոլորտային խումբ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>Մաքսային և հարկային վարչարարության կատարելագործման ոլորտային խումբ (համաձայնությամբ) | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
մայիսի 5 -ի N 477 - Ա
որոշման

| Միջոցառումը | Չափման առարկան | Չափման համար պատասխանատու մարմինը | Փաստագրում/հաշվետվական պարբերականությունը | ՀՀ ՏԶՆՆ-ի վերլուծական եզրակացությունը | Իրազեկման եղանակները |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **Ընկերությունների հիմնում** | | | | | |
| Ընկերությունների գրանցումների թվում էլեկտրոնային գրանցումների տեսակարար կշռի ավելացում, ինչպես նաև տիպային կանոնադրություններով գրանցված ընկերությունների վերաբերյալ վիճակագրության տրամադրում | Էլեկտրոնային գրանցումների քանակի հաշվառում և ստանդարտ կանոնադրություններով գրանցվող ընկերությունների քանակի և գրանցման տևողության վերաբերյալ հաշվառում | ՀՀ արդարադատության նախարարություն | եռամսյակային պարբերականությամբ վիճակագրական տվյալների հրապարակում | կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | |
| **Շինարարական թույլտվություններ** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Ճարտարապետաշինարարա-<br>կան առաջադրանքների և շինարարական թույլտվու-<br>թյունների տրամադրման, ինչպես նաև ավարտական ակտի ձևակերպման փաս-<br>տացի տևողության վերա-<br>բերյալ հաշվետվությունների հրապարակում | տրամադրման օրերի տևողության հաշվառում (II կատեգորիայի ռիսկայնության աստ-<br>իճան ունեցող օբյեկտ-<br>ների համար)՝ նախա-<br>պես համաձայնեցված ձևաչափով | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | հրապարակվում է Երևանի քաղաքապետարանի Yerevan.am պաշտոնական կայքում | հաշվետվական տվյալների ամփոփում եռամսյակային պարբերականությամբ | Ռազմավարակա-<br>ն նախաձեռնությու-<br>ն-<br>ների կենտրոնը և Երևանի քաղաքապե-<br>տարանն իրականացնում են իրազեկման աշխատանքներ |
| Մատակարար կազմակերպության կողմից նախորդ եռամսյակում միացված բաժանորդների միջին հեռավորության գերա-<br>զանցման վերաբերյալ դիմում-բողոքների առնչությամբ տեղեկա-<br>տվության հրապարակում | սպառողների կողմից ՀԾԿՀ ներկայացված դիմում-բողոքների վերլուծություն | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | եռամսյակային | եռամսյակային | հրապարակվում է ՀԾԿՀ կայքում |
| **Էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցին միացում** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Էլեկտրամատակարարման ցանցին միացման օրերի թվի վերաբերյալ հաշվե-տվությունների հրա-պարակում | միացման օրերի փաստացի տևողու-թյան հաշվառում | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | եռամսյակային | հաշվետվական տվյալների ամփոփում եռամսյակային պարբերականությամբ | Ռազմավարական նախաձեռնություն-ների կենտրոնի և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային իրազեկման միջոցառումների իրականացում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Նոր սպառողների սպառ-ման համակարգերն էլեկտրական ցանցին միացնելու գործընթացի վերաբերյալ տվյալների մեջ սահմանված պետական կառավարման կամ տեղական ինքնակա-ռավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված համապատասխան ժամկետների խախտման դեպքերի ընդհանուր թվի/կշռի (մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրա-մադրվող իրավունքների, թույլտվությունների, կամ այլ փաստաթղթերի տրամադրման հետաձգման կամ մերժման մասով) և դրանց հիմնական պատճառների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ | միացման համար օրենսդրությամբ սահմանված ժամ-կետների խախտման պատճառների բացահայտում | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | եռամսյակային | հաշվետվական տվյալների ամփոփում եռամսյակային պարբերականությամ ք | բացակայում է |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| տեղեկատվության տրա-մադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրում-ների նախարարությանը | | | | | |
| **Սեփականության գրանցում** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Դատարաններում (ընդհանուր իրավասության և մասնագիտացված, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների քննվող հողային վեճերի վերաբերյալ (առանձնացնելով Երևան քաղաքը) ամփոփ վիճակագրության վարում | հողային վեճերի առնչությամբ տվյալ կիսամյակում հարուցված դատական հայցերի քանակը | ՀՀ դատական դեպարտամենտ | կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականությամբ<br><br>«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| **Փոքր բաժնետերերի պաշտպանություն** | | | | | |
| Փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության նպատակով «Բաժնետիրական ընկե- | սույն կետով սահմանված հայցերի քանակը | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամ | իրազեկման առանձնահատուկ միջոցառումների անհրաժեշտությու |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| րությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն խախտված համարվող իրավունքների առնչությամբ դատարան ներկայացված հայցերի հաշվառում, այդ թվում՝<br>- շահագրգռվածության առկայությամբ կատարված գործարքների վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում չտեղեկացնելու առնչությամբ հարուցված հայցեր<br>- բաց բաժնետիրական ընկերություններում խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնների համատեղության առնչությամբ հարուցված հայցեր<br>- խորհրդի անդամների ռեեստրում խորհրդի անդամի՝ այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններին վերաբերող | | | վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | ք ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | նը բացակայում է |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| իրավունքների և պարտականությունների չգրանցման առնչությամբ հարուցված հայցեր<br>- .  .  ցանկը կլրացվի ըստ օրենքով նոր կարգավորումների բովանդակության | | | | | |
| **Հարկերի վճարում** | | | | | |
| ԱԱՀ վերադարձի դիմումների ստացման ամսաթվից մինչև դրանց փաստացի վերադարձի օրը ժամանակահատվածի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում | ԱԱՀ վերադարձի փաստացի օրերի հաշվառում | ՀՀ ԿԱ ՊԵԿ | ամսական հաշվետվություններ | հաշվետվական տվյալների ամփոփում եռամսյակային պարբերականությամբ | Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պարբերաբար կազմակերպում են իրազեկման միջոցառումներ՝ շահառուների շրջանում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 2017թ. չորրորդ եռամսյակի համար բնապահպանական և բնօգտագործման վճար-ների հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացրած տնտեսվա-րող սուբյեկտների թվի հաշվառում | սույն կետով սահմանված հաշվետվություն-ները կրճատված թվով ներկայացրած տնտեսվարող սուբյեկտների կշիռն ընդհանուրի մեջ | ՀՀ ԿԱ ՊԵԿ | մեկանգամյա հաշվետվություն | մեկանգամյա հաշվետվական տվյալների ամփոփում | բացակայում է |
| Հարկային վարչարարու-թյանն առնչվող՝ ստորև նշված կետերի վերաբերյալ մոնի-թորինգային ցուցանիշ-ների հայերեն և անգլերեն տարբերակների տեղադրում հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ ա. էլեկտրոնային եղանակով հաշվետվություն ներկայացնողների թիվը և նրանց տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, ինչպես նաև նրանց կողմից վճարված տարեկան հարկային | էլեկտրոնային եղա-նակով հարկային հաշվետվություններ ներկայացնողների կշռի հաշվառում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | եռամսյակային պարբերականությամբ տվյալների հրապարակում | կիսամյակային զեկույցի պատրաստում | բացակայում է |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| մուտքերի տեսակարար կշիռը<br>բ. էլեկտրոնային եղանակով ներկայացված հաշվետվությունների թիվը և նրանց տեսա-կարար կշիռն ընդհա-նուրի մեջ | | | | | |
| Մոնիթորինգային կենտրոնի կարողությունների ընդլայնում՝ հարկ վճարողների գործունեու-թյան նկատմամբ իրականացվող տեսչական գործառույթների շրջանակներում, վերջինիս կողմից ֆիզիկական միջամտությունը նվազեցնելու նպատակով: | հարկային վարչա-րարության էլեկտրո-նային գործիքակազմի ընդլայնում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | շարունակական | բացակայում է | բացակայում է |
| **Արտաքին առևտուր** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Փոխադրող կազմակերպությունների շրջանում նպատակային հարցման կազմա-կերպում՝ դիտարկվող դեպքերում արտահան-ման և ներմուծման ժամա-նակատարության և ծախսատարության բաղկացուցիչների պարզաբանման նպատակով | ժամանակատարու-թյան և ծախսատա-րության կառավար-ման տվյալների հաշվառում | «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ | կիսամյակային հաշվետվություններ | հաշվետվական տվյալների ամփոփում կիսամյակային պարբերականությամբ | հարցում թիրախային ռեսպոնդենտներ ի շրջանում |
| Սահմանահատման գործ-ընթացների վրա «Եվրա-սիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի ուժի մեջ մտնելու կապակցությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացա-կարգով ապրանքների բացթողման և դրա գործողության եզրափակման ժամկետ-ների կրճատման վերա-բերյալ վիճակագրության տրամադրում | Եվրասիական տնտեսական միու-թյան անդամ երկրներից ներմուծվող և նույն երկրներն արտահան-վող «Մաքսային տա-րանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների բաց-թողման և դրա գործողության եզրափակման փաստացի ժամկետ-ների միջին տևողության հաշվառում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | ամսական հաշվետվություններ | հաշվետվական տվյալների ամփոփում եռամսյակային պարբերականությամբ | Ռազմավարական նախաձեռնություն ների կենտրոնը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պարբերաբար կազմակերպում են իրազեկման միջոցառումներ՝ շահառուների շրջանում |
| **Պայմանագրերի** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **կիրարկում** | | | | | |
| **Իրավական հիմքի ստեղծման պահից** | | | | | |
| Օրենսդրությամբ սահմանված պահանջներին համա-պատասխան՝ դատական գործերի (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դատական գործերի) վիճակագրության վարում և դրանց վերաբերյալ տեղեկությունների հրապարակում ՀՀ դատական դեպարտամենտի պաշտոնական էլեկտրո-նային կայքում | դատական գործերի քանակը | ՀՀ դատական դեպարտամենտ | կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության հրապարակում ՀՀ դատական դեպարտամենը պաշտոնական կայքում | բացակայում է | բացակայում է |
| Պարզեցված վարույթի ընթացակարգով քննված վեճերի վիճակագրության վարում | 1. դատական գործերի քանակն ընդհանուրի մեջ<br><br>2. քննված գործերով հայցագնի միջին չափը | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության հրապարակում ՀՀ դատական դեպարտամենտի պաշտոնական ինտերնետային կայքում | | շահառուների շրջանում հրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականու-թյամբ<br><br>«Ռազմավարակա ն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նախաձեռնություն ների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամ բ) ՀՀ արդարադատությ ան նախարարություն |
| Հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու և այն դատարանի կողմից հաստատվելու դեպքում վճարված պետական տուրքը վերադարձնելու վերաբերյալ վիճա- կագրության վարում | 1. Հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնությամբ ավարտված դատական գործերի թիվը և դրա տեսա- կարար կշիռն ընդհանուրի մեջ<br>2. Վերադարձման ենթակա պետական տուրքի չափի վերա- բերյալ վիճակագրու- թյան վարում | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության հրապարակում ՀՀ դատական դեպարտամենտի պաշտոնական կայքում | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում հրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականու- թյամբ<br><br>«Ռազմավարակա ն նախաձեռնություն- ների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամ բ) ՀՀ արդարադատությ ան նախարարություն |
| **Սնանկության** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **ընթացակարգեր** | | | | | |
| **Իրավական հիմքի ստեղծման պահից** | | | | | |
| Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված՝ ներառյալ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը նույն վարույթում գրավոր ընթացակարգով օրենքով սահմանված ժամկետում քննելը և լուծելը՝ առաջին ատյանի դատարանում | սույն կետով սահմանված ժամկետի չպահպանման հիմքով ներկայացված բողոքների քանակային հաշվառում | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականությամբ «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |
| Պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, ինչպես նաև առանձին պահանջները հաստատելու մասին | սույն կետով սահմանված ժամկետի չպահպանման հիմքով ներկայացված բողոքների | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերվող վիճակագրության | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| որոշումների դեմ բերված վերաքննիչ դատարանում բողոքն օրենքով սահմանված ժամկետում քննելը և որոշման հրապարակումը | քանակային հաշվառում | | տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | պարբերա-կանությամբ «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |
| Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտա-պանի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու նպատակով սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված ժամկետում հայցի հարուցումը | սույն կետով սահմանված ժամկետի չպահ-պանման հիմքով ներկայացված բողոքների քանակային հաշվառում | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբե-րականությամբ «Ռազմավարական նախաձեռնություն-ների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատությ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ան նախարարություն |
| Սնանկության գործի ընթացքում կայացվող որոշման դեմ բերված բողոքը միջանկյալ (այն բոլոր դատական ակտերը, որոնք չեն ապահովում գործի վերջնական լուծումը) դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության համար ՀՀ քաղաքացիական դատա-վարության օրենսգրքով ժամկետներում քննելը և լուծելը. | սույն կետով սահմանված ժամկետի չպահ-պանման հիմքով ներկայացված բողոքների քանակային հաշվառում | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերա-կանությամբ «Ռազմավարական նախաձեռնություն-ների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Սնանկության կառավարչի կողմից առանձին գործողությունների (գույքագրում, գույքի իրացում) համար ժամկետների՝ օրենքով սահմանափակում | սնանկության կառավարչի կողմից սույն կետով սահմանվող պահանջները խախտելու առնչությամբ հարուցված դատական հայցերի քանակային հաշվառում | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում հրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականությամբ «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |
| Սնանկության կառավարիչների վարձատրության դրույքաչափը ներկայիս համեմատ 2 %-ով նվազեցում | սնանկության կառավարիչների համար սահմանված վարձատրության չափի հաշվառում | «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպություն | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում հրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականությամբ «Ռազմավարական նախաձեռնություն- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | | ների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |
| Պարտապանի պարտավորությունների առնչությամբ երաշխիք տված անձանց պարտավորությունների կատարման համար սնանկության կառավարիչների կողմից հարուցված դատական հայցերի հաշվառում | սույն կետով սահմանված հայցերի քանակը | ՀՀ դատական դեպարտամենտ | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ չափման առարկային վերաբերող վիճակագրության տրամադրում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին | 2019 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ ստացված վիճակագրական տվյալների վերաբերյալ վերլուծական զեկույցի պատրաստում | շահառուների շրջանում իրազեկում՝ նախապես սահմանված մեթոդով և պարբերականությամբ «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **Այլ միջոցառումներ** | | | | | |
| ՀՀ դատական դեպարտամենտի պաշտոնական էլեկտ-րոնային կայքում վերջինիս կողմից վիճակագրության վարման համար նախատեսել առանձին բաժին | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ